1819), Ապուշեխցի Պողոս Արապյան (Օրթագյուղ, Քյուրքչյու խան, 1820—1835), Արապյան եղբայրներ (Օրթագյուղ, 1836—1853, Կետիկլի Մուսթաֆափաշա խան, 1855), Պողոս Հովհաննեսյան և կամ Արապյան (Օրթագյուղ, 1777—1826), Ակնցի Անդրեաս Վարդապետ Նարինյան (Գոմգափու, Սուրբ Աստվածածին մայր եկեղեցի, 1817—1825), Աբրահամ Ամիրա Թերզյանց (Պեյազիտ, Հասան փաշա խան, 1824—1826), Հովհաննես Մյուհենտիսյան (Զուխաճը խան, Սկյուտար, Ղալաթիա, Գատրգյուղ, Պեյօղլու, 1839—1891), Հարություն Մինասյան (Վեզիր խան, Ասմաալթը Զամլը խան, 1860—1871), Ա. Ճեվահիրճյան (Իմամը Ալի խան, 1844—1865), Կարապետ Ություջյան (Զինիլի խան, Ղալաթիա, 1855—1883), Հովհաննես Մարգարյան (Սկյուտար, 1853), Հարություն (Արթին) Փափազյան (Ճեվտհիրճյան 1853—1879), Թահմիզճիյան (Էմիրլեր խան, 1854—1862), Հովհաննես Զամուրճյան Տերոյենց (Վեզիր խան, Քեպեճի խան, Աշիր էֆենտի խան, 1854—1888), Մկրտիչ վարդապետ Խրիմյան (Սկյուտար, 1855, Վան, 1852, Մուշ, 1863), Թադեոս Տիվիթճիյան (Վեզիր խան, Ֆեներ-Հալիչ-Քիրեմիթ մահալլեսի, 1856—1879), Ռուբեն Քյուրքչյույան (Ֆինճանճըլար Եոքուշու-Ամերիկյան Պրոտեստանտական գրասենյակ, Պայպլ Հաուզի տեղը, Ղալաթիա, 1857—1877), Բալլի խան, 1901—1912), Միհրան Մարտիրոսյան (Պապը Ալի ճատտեսի, 1903—1909), Օննիկ Արզումանյան (Հակոբյան խան, 1908—1912), Միսաք Գոչունյան (1908, Արշակ Կարոյան (Պապը Ալի Իքտամ խան, 1908—1912), Հովնան Փալագաշյան (Մոլլա Թաշ, Պեոյուք Ենի խան, 55, 1801—1912), Տիգրան Տողամաճյան (Փարիզ 18, Կոպրլեն փողոց, Կ. Պոլիս Մոլլա Թաշ խան, 1894—1912), Հովհաննես Ազնավուր (Պապը Ալի ճատտեսի 48, 1908—1912), Երվանդ Մսրլյան և Գաբրիել Հովհաննեսյան (1902—1912), Մերուժան Պարսամյան (Ղալաթիա ճամի գափրսը 9, 1909—1915), Ատոմ Շահեն (Պեյօղլու Ենի Զարշը 52, 1909—1915), Մեսրոպ Բեսիմճի և Աբիկ Վանլյան (Մոլլա Թաշ 16, 1909—1915), Վաղինակ Սմբատ Բյուրատ (Զեմպերլիթաշ, Մոլլա Թաշ, Պեյօղլու Այասփաշա, Իսթանպուլ Օրհանպեյ խան 25, 1908—1915), Հայկ Թիրաքյան (1911—1915), Պետրոս Նշանյան և Արշակ Պապիկյան (Մոլլա Թաշ, 1910—1915)։

Կ. Պոլսո մեջ գործած տպարանների շարքին ստորև ժամանակագրական կարգով կը նշենք նաև հետևյալ անվանի գրաձուլիչների անուններն ու անոնց ձուլարաններու գտնված վայրը։

Գրիգոր Ռաֆայելյան (Ճաղալօղլու ճատտեսի Սեթյան խան, Գահիրե, 1846—1811), Հովհաննես Մյուհենտիսյան (1839—1891), Խաչիկ